առին զբանալի դրան Ս. Աստուածածնի 'ի ձեռաց Լուսաբարին, եւ Խորհրդականք անկեալ 'ի դրունս այլազգեաց հաղիւ կարացին դարձուցանել զայն յետս, և էին 'ի կասկածի վասն այլ Ս. Տեղեաց եւ կալուածոց, (1825. 'ի 19 Հոկտեմբերի).

ԳԼՈՒԽ ԽԶ.

Առաջնորդ Եգիպտոսի Կիրակոս: Ներքին խռովութիւն վանաց: Նուիրակունք Եթովպիոյ: Հոգեւոր Լաւդիկեայ: Անկումն Եղիա Եպիսկոպոսի: Խնդիր առաջնորդութեան Եթովպիոյ:

ԻԲՐԵՒ եհաս Կիրակոս Եպիսկոպոս 'ի Կոստանդինուպոլիս սակս պատմելոյ ազգին զաղէտս Երուսաղէմի, որպէս գրեցաք, որոշեցաւ լինիլ Առաջնորդ Եգիպտոսի. կոչեցին և զԶաքարեայ վարդապետ Կոբեցի 'ի Նուիրակութենէ, եւ եդին Փոխանորդ Աթոռոյն 'ի Կոստանդինուպոլիս եւ զՑարութիւն վարդապետ Եդեսիոյ առաքեցին Առաջնորդ 'ի Զմիւռին քաղաք: Հասեալ Կիրակոսի յԵգիպտոս 'ի վիճակ իւր, առ 'ի անբասիր կացուցանելոյ զանձն յամենայնէ՝ ըստ օրինադրութեան Պօղոս Եպիսկոպոսի՝ ծայրագոյն կառավարչի Աթոռոյն և կամեցողութեամբ ազգապետաց, ձեռն արկ բարեկարգ տնտեսութեամբ կառավարել զեկեղեցին. ընտրեաց զերիս անձինս յերեւելեաց քաղաքին խորհրդական և հոգաբարձու առաջնորդական գործոց, զԱրեւելից Պօղոս վարդապետ փոխանորդ, զոմն հաւատարիմ եկեղեցական, սահմանեաց արկղ արդեանց եւ տումար ելից և մտից. վերատեսուչ դպրոցի և հիւանդանոցի, և զայլ բարեկարգութիւնս, ըստ տանելոյ տեղւոյն և ժամանակին. յաւել զվարձս տանց, զարկղն և զտումարն պահեաց առ իւր և զբանալին ետ ցՓոխանորդ իւր: Սակայն Աթոռն Երուսաղէմի ոչ երբէք եդիտ զխաղաղութիւն, զի բաց յարտաքին թշնամեաց, յարուցեալ էր և ներքին ընտանի երկպառակութիւն 'ի մէջ միաբանաց. զի նենդաւոր և դաւաճան լեալ ատէին և թշնամանէին զմի-